

Հայոց թագաւորը՝ դէմքն ու ոտքերը բաց եւ սպիտակ վերարկու մը հագած պառկած է սպիտակափառ անկողնի մը մէջ . իսկ գլխուն քով դրուած է իր ոսկեղէն թագը : Գագաղին ընկերացող մոմակալներուն թիւը՝ չորսէն աւելի չէ եղած , միշտ սպիտակ զգեստներ հագած . նոյնպէս սպիտակ հագած են նաեւ դագաղաբարձ տասներկու աղքատները , ինչպէս Լեւոն փափագ յայտնած էր իր կտակին մէջ , զոր պիտի տեսնենք վարը :

Փամանակակից պատմիչ մը՝ Juvénal des Ursins իր *Hist. de Charles VI* գործին մէջ (ամ Տն. 1393) կը վկայէ , թէ Հայոց թագաւորն իր կենդանութեանը բարի համբաւ մը կը վայելէր եւ պարկեշտ կեանք մը կանցունէր , ապրելով իբրեւ ուղղափառ : Իր վայելուչ խօսակցութիւններուն ու վարած պարկեշտ կեանքին համար շատ սիրելի եղած էր ամենուն , այնպէս որ՝ իր թագման օրը դագաղին կը հետեւէին իշխաններ եւ ահագին բազմութիւն մը ժողովրդեան :



ԺԸ

Լեւոնի կտակը



ին Փամանակ սովորութիւն էր , որ բարեպաշտ մարդոց կողմէ ի նպատակ կեղեցիներու, վանքերու եւ ուրիշ հաստատութիւններու՝ կատարուած բոլոր նուէրներն արձանագրուէին օգտուող շինութիւններու պատերուն վրայ , ինչպէս կը տեսնուի Հայաստանի բազմաթիւ կեղեցիներուն վրայ . օրինակի համար՝ Անիի մէջ Առաքելոց եկեղեցիին ամենահին արձանագրութիւնը կըսէ . « ՆՁ (= 1031). թու. Ծնորհիւն « Աստուծոյ եւ Աբողամբ որդի Վահրամա իշխանաց իշխանի ետու զկառու « նուաի արան ի սուրբ Առաքեալքս վասն եղբաւր իմո Գրիգորոյ ասող « ջութեան եւ կենացն յերկարութեան » : Արդ՝ ասիկա այն Փամանակուան կտակն էր : Ըսածս աւելի որոշ կերպով կը հաստատուի ուրիշ ընդարձակ արձանագրութիւնով մը , որ յիշեալ իշխանաց իշխան Վահրամբ կողմէ գրուած է Մարմաշէնի Ս. Ստեփաննոսի եկեղեցիին հարաւային պատին վրայ , այսպէս . — « Ծնորհիւն Այ եւ Վահրամ իշխանաց իշխան եւ « անթիպատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղէ Պահ « լաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի որ յաղագս